

գութեան նշան մը ցցուր անոնց :

Ինկերութեան մէջ ուրիշներուն խօսելու ժամանակը մի մրափեր . ոտքի վրայ կեցողին դիմացը մի նստիր . քեզի չընկած բանը մի խօսիր . երբոր ուրիշները կեցեր են , դու մի քալեր :

Ը ողոքորթութիւն մ'ըներ . ովոր քու վրադ սէր ցուցըներ՝ անոր հետ կատակ մ'ըներ :

Ինկերութեան մէջ առանձին բան մը մի կարդար . թէ որ պէտք ըլլայ՝ թողորթիւն խնդրելով ըրէ : Խնչուան որ չխնդրէ մէկը քեզմէ , դուն կարդացողին կամ գրողին քով մի մօտենար որ անոր առջնէի գիրքը կամ թուղթը տեսնես :

Երբոր քանի մը հոգի բանի մը վրայ կը խօսակցին , դուն քու կարծիքդ մի զուրցեր՝ ինչուան որ քեզի չհարցընեն :

Երբոր խելացի բան մը կը խօսիս , կերպարանքդ զուարթ , բայց քիչ մը ծանր ըլլայ :

Ուրիշին դժբաղդութեանցը վրայ ախորժ մի ցուցըներ , թէ և թշնամիդ ըլլայ :

Երբոր քեզմէ պատուաւոր մարդու մը կը հանդիպիս , մէկդի կեցիր . մանաւանդ՝ թէ որ նեղ դրան մէջ գտնուիս , թող որ նախ ինքը անցնի :

Հարկաւոր գործքի վրայ խօսելու ատեն , քիչ՝ բայց չիշդ խօսէ :

Երբոր հիւանդի մը տեսութեան կ'երթաս , բժշկական տեղեկութիւններ մի ծախեր՝ թէ որ իրաւցընէ չես գիտեր :

Ոյէ գրելու և թէ խօսելու ատեն՝ ամենուն պէտք եղած պատուանունը տուր ըստ աստիճանին , ու երկին սովորութեանը յարմար :

Ո'եծերուդ հետ խօսելու ատեն մի անդեր քու կարծիքդ . հապա քու դատմունքդ ալ պարկեշտութեամբ ուրիշին կարծեացը համաձայնեցուր :

Այէ որ քեզի վիճակակից կամար-

հետակից մարդուն շատ խորհուրդ չտաս . չէ նէ շուտով ատելի ու զզուելի կ'ըլլաս :

Երբոր մէկը կրցածին շափ կ'աշխատի , ըրածը չաջողի նէ ալ՝ զինքը վար մի զարներ :

Երբոր մէկուն խրատ մը պիտի տաս , աղէկ մտածէ թէ արդեօք հրապարական տալը աղէկ է թէ առանձին . շուտ մը՝ չէ նէ ատեն անցնելէն ետքը . զուրցելիքդ աղէկ կշռէ . յանդիմաննելու ատենդ ամենելին բարկութեան նշան մի տար :

Ո'ր և իցէ ժամանակ երբոր մէկը զքեզ խրատէ՝ չնորհակալութեամբ ընդունէ . թէ որ գիտես թէ յանցաւոր չես , ըստ ժամանակին և ըստ տեղայն իմացուր քու անմեղութիւնդ զքեզ խրատողին :

Հարկաւոր բանը կատակի մի զարներ . կծու խօսք ամենելին մի խօսիր որ ատելի չըլլաս . թէ որ զուարձալի խօսք մը պիտի զուրցես , նայէ որ մէկուն ծանր չգայ , որպէս զի սիրելի ըլլաս :

Երբոր մէկը կը յանդիմանես , նայէ որ գուն ալնոյն յանցանքը չունենաս . օրինակը աւելի կ'ազդէ՝ քան թէ գեղեցիկ խրատները :

Ոյէ որ կ'ուզես որ վրադ համարմունք ունենան՝ նայէ որ գովելի մարդկանց ընկերութեանը մէջ գտնուիս : Կ'ելի աղէկ է մինակ կենալը , քան թէ գէշընկերութեան մէջ ըլլալը :

ՎԵՐՏԱՌՈՒԹԻՒՆ

Այր է հըմուտ կիւրակոս ,
Բայց երեսյթն աննըշան .
Այր անհըմուտ է Մարկոս ,
Եւ երեխ գիտնական :
Անվերնագիր նա մատեան ,
Սա վերնագիր անմատեան :

ԴՏԱԼԱՑԻ ՈՄՆ :